ԳԱԲՈ ԲԻՁՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ես ու Գաբո բիձեն անցնում էինք Լոռու ձորով։

— Հե՛յ, տիրացու,— ձայն տվավ նա։

— Համմե՛։

— Հրամանքդ շատ։ Ես տեսնում եմ, որ էս վեր նոր ուսում առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կասես։

— Ինչո՞ւ, Գաբո բիձա։

— Նրա համար, որ հենց գիտեն՝ ամեն բան մենակ իրենք են հասկանում, իրանցից առաջ էչ ոչ մարդիկ են եղել, ոչ բան են հասկացել։ Մին էլ կտեսնես բռնեցին ու գլխիդ գելի ավետարան կարդացին. հա՛ էս ճանճ պահի՛ր, էս աբրշումի ճիճու պահի՛ր, էսպես մածուն շինի՛ր, էսպես ցանի՛ր, էսպես հնձի՛ր. . . Տո՛, հեր օրհնած, մի առաջ հարցրու, տես՝ էդ բաները դրանք էլ միտք են արե՞լ, թե չէ, նրանից ետը՝ թեկուզ ուշունց տուր։

— Հետո մի՞տք եք արել որ, Գաբո բիձա։

— Ախպեր, ա՛յ, ես հիմի, օրինակի համար, մինն ասեմ, դու տես, մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանո՞ւմ, թե չէ։ Մի աշունք մեր Դավոն գնաց քաղաքը խոզ ծախելու։ Մի ճանանչ մարդ աբրեշումի ճիճվի սերմ էր տվել, թե տարեք ձեր տեղը առաջ բերեք։ Ճամփա պահեցինք մինչև գարունքը բաց եղավ։ Գարունքը որ բաց էլավ, ոնց որ խրատ էր տվել՝ էս ճիճվի սերմը բերինք մեր խիզանի ծոցում դրինք, որ տաքանան, դուրս գան։ Դուրս եկան՝ ասեղի ծերի չափ մանր սև զատեր։

— Տիրացո՛ւ։

— Համմե՛։ — Էդ ձեր ուսումնականները թե գիտեն աբրեշումի ճիճուն ի՞նչ կուտի։

— Թթան տերև։

— Ապրե՛ս, դրուստ ա։ Գնացի ձորից մի շալակ թթան տերև բերի, կապեցի մենծ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրեն ածի։ Ինչքան մարդ եկավ նայելու, ոչ ոքի տուն չթողինք, որ աչքով չտան, ասինք՝ թող մի տեսնենք՝ ինչ ա դուրս գալի։ Ա՛յ տղա, էդ անտեր ճիճուները մի քանի օր կացան ու կոտորվեցին։ Հիմի թե ասենք՝ նրանի՞ց էր, որ գոմեշի ձագը շատ էր մոտ կապած, ոտնատակ էր տալիս, թե նրանի՞ց էր, որ հավերը տուն էին թափում՝ կտցահարում, դե ո՞նց անենք։ Հո՛ չէինք կարող հավերը կոտորել, կամ ձագն սպանել։ Թե ասենք՝ անձրևիցն էր, որ երդիկով ներս էր թափում, մին էլ մարդ միտք ա անում, թե բա քաղաքումն անձրև չի՞ գալի. . . Մի խոսքով՝ բան գլուխ չեկավ։ Տեսանք, որ մեր երկրումը աբրեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում։ Դե՛, զարմանալու ի՞նչ կա որ. էնպես երկիր կա՝ հավք չի ապրում, էնպես երկիր կա՝ ցորեն չի դուրս գալի, ամեն աշխարհք մի տեսակ բնություն ունի, բայց էս մեր նոր ուսում առածները էսքանն էլ չեն հասկանում։